ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Դր. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Անցյալ դարի վերջին տասնամյակը արևմտահայ գրականության համար նշանավորվեց բանաստեղծների մի փայլուն սերնդի հրապարակ գալով։ Ռուբեն Որբերյան, Վահան Թեքեյան, Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց—ահա այն տիրական անունները, որ արևմտահայ նորագույն ժամանակների բանաստեղծության փառապսակն են կազմում։ Այդ սերնդի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վահան Թեքեյանը։ Նա նախ ապրեց ստեղծագործական և քաղաքական հայացքների շատ բարդ ու հակասական զարգացում, ապա, ի տարբերություն իր տարաբախտ գրչակից ընկերների, փրկվեց ապրիլյան մեծ եղեռնից, ապրեց մինչև խոր ծերություն, թևեցա հեռվից, սակայն տեսավ և ողբեցնեց իր հայրենիքի վերածնունդը։

Իր ստեղծագործության բազմաթիվ կողմերով կապված ժամանակի գրական սերնդի հետ, հետագայում նա ապրեց ստեղծագործական և քաղաքական հայացքների շատ հետաքրքիր էվոլյուցիա։ Գրական գործունեությունը Վահան Թեքեյանն սկսեց որպես բուրժուական մտայնության և դեկադենտական արվեստի կարկառուն ներկայացուցիչ։ Իր բանաստեղծություններում նա տուրք տվեց այն ժամանակ ոմոդայական գրականության անհատապաշտական ուղղություններին։ Արտահայտեց մենակության, տրամության, գառնության, անհուսության, միստիկականության, երբեմն նաև ընդգծված ապգայնական տրամադրություններ։ Կյանքի վերջին տարիներին, սակայն, նա կարողացավ ոչ միայն հաղթահարել դեկադենտական գրականության իրեն կաշկանդող այդ շղթաները, այլև հայտարարեց, թե՝ «տեսակ մը Ռոմյունիստ ալ ես եմ» և հարց ստեղծագործական ազդյուրին՝ կյանքին և նրա առաջադեմ գաղափարներին, որը նրան դուրս բերեց ռեալիստական երկեր ստեղծելու ճանապարհը։ Վահան Թեքեյանի ստեղծագործության բարդ ու հակասական բնույթը չխանգարեց, որպեսզի նա կարողանա ճիշտ գնահատել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի բախտորոշ դերը հայ ժողովրդի ճակատագրի համար և դառնալ իր երիտասարդ Սովետական Հայրենիքի ամենաջերմեռանդ կողմնակիցներից ու պաշտպաններից մեկը։

I

Վահան Թեքեյանը ծնվել է 1878 թվականի հունվարի 21-ին (հին տոմարով), Կ. Պոլսի Օրթագյուղ կոչվող արվարձանում, Կեսարիայից գաղթած առևտրականի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է նույն բաղաքում, նախ Ներսիսյան վարժարանում, ապա հաճախել է Գերպերյան և Ազգային Կենտրոնական վարժարանները։ 1894 թվականին դուրս է գալիս Կենտրոնական վարժարանի չորրորդ դասարանից և ստանձնում գրագրի պաշտոն։ 1896 թվականին մեկնում է Լոնդոն, ուր մի քանի տարի մնալուց հետո, հաջորդաբար անցնում է Մարսել, Հոլանդիա, Եգիպտոս։ 1903 թվականին Ալեքսանդրիայում սկսում է հրատարակել «Գիրքակ» գրական ամսաթերթը, որի վերահրատարակությունը 1909 թվականից շարունակում է Կ. Պոլսում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի սահմաններից դուրս գտնվելով, նա պատահմամբ փրկվում է ապրիլյան մեծ եղեռնից։ 1920 թվականից նորից հաստատվում է Կ. Պոլսում, ուր սկսում է հրատարակել «Ժողովրդի Ձայն» թերթը։ Այնուհետև անցնում է Բուլգարիա, Հունաստան, Սիրիա, Եգիպտոս և վերջնականապես հաստատվում Կահիրեում։ Այդ տարիներին խմբագրում է նաև Բեյրութի «Զարթոնք», ապա Կահիրեի «Արևս» թերթերը։ Եղել է նաև ուսուցիչ և տնօրեն՝ զանազան հայկական դպրոցներում։

Վահան Թեքեյանը մեռավ 1945 թվականի ապրիլի 4-ին։ Թաղված է Կահիրեի հայոց գերեզմանատանը՝ Արփիար Արփիարյանի և Երվանդ Օտյանի կողքին։

Վահան Թեքեյանը եղել է նաև աչքի ընկնող հասարակական գործիչ։ Իր քաղաքական հայացքներով նա նախ հարել է Հնչակյան պարտիային, ապա «Վերակազմյալ Հնչակյան» ուղղությանը, իսկ 1909 թ. եղել է Ռամկավար-Ազատական պարտիայի գործոն անդամներից մեկը։ Թեպետ իր քաղաքական գործունեության ընթացքում ունեցել է հակասություններ, խարխափել բուրժուական լիբերալիզմի սահմանափակ մտածողության շրջանակներում, սակայն եղել է հետևողական հակադաշնակցական, մերկացրել է այդ պարտիայի հակաժողովրդական գործունեությունը։

Վահան Թեքեյանը գրել սկսել է շատ վաղ հասակից՝ 1893 թվականից։ Երբ տակավին տասնվեց տարեկան էր, 1894 թվականին, Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում տպագրվեց նրա առաջին արձակ գործը՝ «Կաղանդը Կեսարիո մեջ», իսկ 1895 թ. Արշակ Չոպանյանի հրատարակած «Մաղիկ» հանդեսում տպագրվում է նրա առաջին՝ «Ծովեզերքին վրա» արձակ բանաստեղծությունը։

1901 թ. Փարիզում լույս տեսավ նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Հոգեր» խորագրով։ Այնուհետև նա հրատարակել է «Հրաշալի հարություն» (1914), «Կեսդիշերեն մինչև արշալույս» (1919), «Սեր» (1933), «Հայերգություն» (1943) և «Տաղարան» (1945)։ Ունի նաև արձակ՝ վիպական և դրամատիկական գործեր ու պատմվածքներ։ Սակայն կարևորն ու էականը նրա մեջ, իհարկե, բանաստեղծն է։

1943 թ. լույս տեսած «Հայերգություն» ժողովածուի մեջ ամփոփելով իր ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում գրած հայրենասիրական բանաստեղծությունները՝ նա առաջաբանի մեջ գրում էր, որ այդ ժողովածուն կոչված է թարգմանը լինելու՝ «...Հայ ազգին կարճ ատենի մը մեջ ապրած հոգեկան աճումի և կորուստի, հրճվանքի և տառապանքի, հույսի, անհուսության և հետո դարձյալ հույսի բոլորովին անօրինակ, իրեն միայն հատուկ կյանքը ու միանգամայն արտահայտ այդ կյանքեն ներշնչված, հոս արվեստ դարձած ոգին»[1]։

Այդ կյանքը, որի ոգին արտահայտելու էր կոչված իր ստեղծագործությունը, նա բաժանում է չորս շրջանի, որոնք համապատասխանում են նաև իր ստեղծագործական զարգացման շրջաններին։ Ահա այդ շրջանները, ըստ Թեքեյանի դասավորման և բնութագրման. «Առաջին՝ 1900—են 1908, բռնապետության դեմ մաքառումի և հույսի շրջան, երկրորդ՝ 1908-են 1915, հարաբերական խաղաղության, բայց և վրդովումի և վերհիշումի շրջան, երրորդ՝ 1916-են 1922 և ավելի վերջը, քայքայման և անզոր մոլուցքի շրջան, ու չորրորդը՝ 1922-են առաջ սկսած և մինչև այսօր շարունակվող. տրտմության զուգահեռ՝ խանդավառության շրջան»[2]։

Փորձենք բնութագրել Վահան Թեքեյանի ստեղծագործության այդ տարբեր շրջանները՝ իրենց առանձնահատկություններով։

2

Վահան Թեքեյանի ստեղծագործության առաջին շրջանը համընկնում է այն ժամանակի հետ, երբ արևմտահայ գրականության մեջ լուրջ տեղաշարժեր են կատարվում։ Նախորդ շրջանում տիրող գրականության ռոմանտիկ ուղղությանը, որը կտրված լինելով կյանքից ազատագրական պայքարի իսկական պաթոսը փոխարինում էր անցյալի իդեալականացման իլյուզիայով, փոխարինելու էր գալիս գրականության ռեալիստական (իրապաշտ) այն ուղղությունը, որը գլխավորում էր «Մասիս» շաբաթաթերթի շուրջը խմբված գրական սերունդը Արփիար Արփիարյանի առաջնորդությամբ (Լևոն Բաշալյան, Գրիգոր Զոհրապ, Տիգրան Կամսարական, Հրանտ Ասատուր, Ռուբեն Որբերյան, Սիպիլ և ուրիշներ)։

Առաջադեմ գրողների այդ խումբը ձգտում էր գրականությունը կապել կյանքի հետ, ծառայեցնել կյանքի կենսաթթիռ խնդիրներին։ «Մասիս» շաբաթաթերթի 1892 թվականի հունվարի 4-ի խմբագրականը (այդ շրջանում խմբագիրը Գ. Զոհրապն էր) այդպես էլ ազդարարում էր. «Գրականությունը ժողովրդական կյանքեն կքաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար»։

Թեպետ ռեալիստական առաջադեմ այդ ուղղությունը կատարյալ հաղթանակ էր տանում արևմտահայ գրականության բոլոր ընագավառներում, սակայն արդեն ստեղծվում էին անհրաժեշտ նախապայմաններ նաև հետագիմական գրական նոր ուղղությունների առաջացման համար։

---

[1] Վահան Թեքեյան, Հայերգություն, Կահիրե, 1943, էջ 5։
[2] Նույն տեղում.

Արևմտյան Եվրոպան արդեն թեակոխել էր իմպերիալիստական զարգացման իր փուլը, որն իր հետ պետք է բերեր նաև բուրժուական արվեստի վերջնական տրոհումը։ Հետադիմական ռոմանտիզմի մեռնող գրական ուղղություններ ինքն արդեն պիտի կյանքի կոչեր բուրժուա-ազնվականական մի շարք գեղագիտական գեղարվեստական «մոդեռն» ուղղություններ (ակմեիզմ, իմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ)։ Գրական այդ նորամուծ ուղղությունները պարզում էին մեռնող հետադիմական ռոմանտիզմի դրոշը, զարգացնում նրա տեսությունը և ստեղծում էին յուրատեսակ «նեոռոմանտիզմի» պաշտամունք, որն իր հիմքում ուներ ծայրահեղորեն անկումային հակառեալիստական բնույթ։

Գրական այդ նոր շարժումը շատ շուտով մեծ տարածում գտավ նաև Եվրոպայի այլ ժողովուրդների մոտ, այդ թվում նաև այն երկրներում, որտեղ կապիտալիստական հասարակական հարաբերությունները դեռ չէին հասել զարգացման իմպերիալիստական աստիճանին, կամ ուր դեռ որոշ դերիշխող դեր էին խաղում ֆեոդալական հարաբերությունների մնացուկները։ Խոսելով գրական այդ նոր ուղղությունների տարածման մասին ռուսական գրականության մեջ, Պլեխանովը բացատրում է, թե ինչպես փիլիսոփայական կամ գեղագիտական ուսմունքների տարածումը կարող է կանխել այս կամ այն երկրի հասարակական հարաբերությունների սիստեմի զարգացումը, նա ցույց է տալիս, որ այդ ուղղությունների տարածման համար պարտադիր չէ, որ տվյալ երկիրն անպայման ապրի հասարակական հարաբերությունների նույնպիսի անկում, ինչպիսին ապրում է այն երկիրը, որի պայմաններում ծնունդ են առել այդ ուղղությունները։ «Բայց եթե ռուսական գեղագեղագիտության առաջացումը անհրաժեշտ չափով չի կարող բացատրվել մեր, այսպես ասած, ընտանեկան պատճառներով, սակայն այդ ոչ մի չափով չի փոխում նրա բնությունը։ Արևմուտքից մեր երկիրը ներմուծված՝ մեզ մոտ նա չի դադարում լինել այն, ինչ որ նա եղել է իր տանը՝ «գունատ անզորության» ծնունդ, որն ուղեկցում է այն դասակարգի անկմանը, որն այսօր իշխում է Արևմտյան Եվրոպայում»[1]։

Նույն այդ երևույթը տեղի է ունենում նաև արևմտահայ գրականության մեջ։ Գտնվելով ֆրանսիական գրականության ուժեղ ազդեցության ոլորտում, նա ևս իր վրա կրում է իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուա-ազնվականական գրական անկումային ուղղությունների քայքայիչ ներգործությունը։ Գրական այդ նոր «մոդեռն» շարժումները բավական արագ տարածում են ստանում արևմտահայ գրական շրջանակներում, լրիվ ձևավորվելով որպես ինքնուրույն գրական ուղղություն, որին հետագայում Հ. Օշականը տվել է «տպավորապաշտ», «խորհրդապաշտ» կամ «գեղապաշտ» անունները։

Մեծ գեր էր խաղում այստեղ. մասնավորապես, այն հանգամանքը, որ սիմվոլիստները հատուկ ուշադրություն էին հատկացնում բանաստեղծական ձևերի կատարելագործմանն ու տաղաչափության հարստացմանը, բանաստեղծական լեզվի նրբացմանը, որը հմայում էր իր երաժշտականությամբ ու գրավչությամբ։

Հատկապես շատ ուժեղ էր սիմվոլիստական բանաստեղծական դպրոցի հիմնադիրների՝ Պ. Վեռլենի, Ս. Մալարմեի, Ա. Ռեմբոյի, Ժ. Մորիասի հմայքը։ Ֆրանսիական սիմվոլիզմը աչքի էր ընկնում իր երկու առանձնահատկությամբ, նախ՝ գեղեցիկի պաշտամունքով, այն, ինչ ամենից ավելի հմայում էր նրա հետևորդներին (այստեղից էլ ծագում է Հ. Օշականի՝ գեղապաշտ որակավորումը), և երկրորդ՝ անհատի պաշտամունքով, անհատապաշտությամբ։ Գրական այդ ուղղության տեսական արմատները բիում էին Ա. Շոպենհաուերի, Է. Մախի սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայությունից։ Հրաժարվելով ռեալիզմից և գրականության դեմոկրատական տրադիցիաներից, սիմվոլիստները հանդես էին գալիս ծայրահեղ անհատապաշտության և միստիցիզմի քարոզով։ Պայքարելով մատերիալիստական գեղագիտության դեմ, որը խորապես համակված էր հանրությանը ծառայելու գաղափարներով, սիմվոլիստները վերականգնելով ռնակցիոն ռոմանտիկների «արվեստը արվեստի համար» տեսությունը՝ իրականացնում էին արվեստի անջատումը կյանքից, և նրա մերձեցումը կրոնին։ Գրականությունը կտրել կյանքից, հեռանալ իրականությունից և թաղվել երազային խորհրդածությունների և վերացական զգայությունների աշխարհում — ահա, վերջին հաշվով, անկումային այդ ուղղությունների նպատակը։

Գրականության առաջադեմ և հետադեմ երկու ուղղությունների սրվող հակամարտության այդ պայմաններում են սկսվում Վահան Թեքեյանի գրական առաջին քայլերը։

Արևմտահայ գրականության աչքի ընկնող դեմքերից մի քանիսը արդեն որոշակի տուրք էին տալիս ֆրանսիական գրականության այդ նորահայտ ուղղություններին։ Լևոն Շանթը հան-

[1] *Г. В. Плеханов*, Искусство и литература, Москва, 1948. стр. 256.

դիսացավ այն առաջիններից մեկը, որ հրաժարվելով իր նախորդ շրջանի ռեալիստական-դեմոկրատական գործերի («Դուրսեցիները», «Մենք բարովի իրիկունը» և այլն) առողջ տրադիցիաներից, սկսեց բռնել կյանքից կտրված սիմվոլիստական գրականության ուղին։ Կենդանի կյանքի ղղացմանը նա հակադրում էր պատրանքը («Ես պատրանքը սիրեցի»)։ Իրական կյանքը փոխարինել գրքային վերացական կյանքով, իրական սերը երազային սիրով, իրական հայրենիքը՝ պատրանակերտ հայրենիքով.

Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներշընչված ստեղծեցի՝ միշտ անդոյ,
Բայց անձնուրաց ազնիվ դեմքեր սիրեկան,
Երբ իրական աշխարհին մեջ միշտ դժգոհ՝
Իդեալի կյանքեն երգել ուզեցի,
Ես պատրանքը սիրեցի[1]։

Տակավին տասնութ տարեկան՝ Վահան Թեքեյանն իր անդրանիկ բանաստեղծություններից մեկն ուղղում է «Առ Շանթ», և նրա «Ես պատրանքը սիրեցի» ծրագրային բանաստեղծությանը հակադրում է իր նույնքան ծրագրային՝ «Ես ցավը սիրեցի» բանաստեղծությունը.

Սրնած օրես իսկ կուրծքրս ցավ մը կա
Հին ժառանգական ցավն հայրենիքիս,
Եվ բանի անցան տարիներն երկար՝
Վիշտն հոն վերք փորեց, և բմբոստ հոգիս
Մրոնչմամբ դիտեց՝ անզոր դրացի՝
Իմ սրրտես հոսող արյունն տխուր
Պատրանքներ հաղար սրրտիս վրա ինկան
Ու, ճնշեցին.
Ես ցավը սիրեցի[2]։

Պատրանքներից դեպի ցավալի իրական կյանքը վերադառնալու, դրականությունը կյանքին ծառայեցնելու կոչ էր այդ բանաստեղծությունը։

Դա Վահան Թեքեյանի վաղ շրջանի ստեղծագործության առաջին գիծն է, այն առանձնահատուկ գիծը, որ դեռ դարիս սկզբին ճիշտ նկատել ու նշել է ռուս ականավոր բանաստեղծ և գրականության տեսաբան, հայ գրականությանը քաջածանոթ Վալերի Բրյուսովը։ Վերջինիս բնութագրմամբ՝ Վահան Թեքեյանը հանդիսացավ Մ. Պեշիկթաշլյանի և Պ. Դուրյանի բանաստեղծության «անմիջական ժառանգորդը», իր ժամանակի բանաստեղծներից «ամենից ավելի բաղմազանն ու բաղմակողմանին» և իր ստեղծագործության մի քանի առանձնահատկություններով և ընդգրկած թեմաներով ամենից ավելի մոտեցավ արևելահայ բանաստեղծության դրոշին[3]։ Այդ դպրոցը, որի մասին ակնարկում է Վ. Բրյուսովը, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի ռեալիստական-դեմոկրատական բանաստեղծության ուղղությունն էր։

Իր ստեղծագործության ռեալիստական գիծն է, որ ինքը՝ բանաստեղծը բնութագրել է որպես «բռնապետության դեմ մարտնչման և հույսի շրջան», որ մասամբ շարունակվում է նաև նրա բնութագրած երկրորդ շրջանում՝ «հարաբերական խաղաղության, բայց և վրդովումի և վերհիշումի շրջանում»։ Այս երկու շրջանում էլ հայ ժողովրդի ճակատագիրն ու նրա ազատագրական պայքարը գտնվում են բանաստեղծի ուշադրության կենտրոնում։ Նա իր բազմաթիվ բանաստեղծություններում հանդես է գալիս ոչ միայն հայ ժողովրդի ծանր վիճակը ողբացողի, այլև այդ վիճակից դուրս գալու ճամփաներ որոնողի դերում, ըստ որում նա լավատես է, նա հավատում է մոտակա փրկությանը և այդ փրկությունը չի սպասում դրսից, այլ իրեն՝ հայ ժողովրդի զավակների վրա է դնում իր հույսը.

[1] Լևոն Շանթ, Երկեր, հ. I, Բեյրութ, 1946, էջ 353։
[2] Վ. Թեքեյան, Ես ցավը սիրեցի, «Կյանք և Գիր» տարեգիրք, Կահիրե, 1948, էջ 7։
[3] *В. Я. Брюсов*, Поэзия Армении и ее единство на протяжении веков, сборник „Поэзия Армении", М., 1916, стр. 85.

Դաշտե՛ր հայոց, մեր զոհերուն համար պետք չեն
Ո՛չ դամբարան, ո՛չ այլ ծառեր իբր հովանի...
Հարալեզներ մենք կրշինենք մեր սրտերեն
Ու օր մ՝ ոտքի՛ ամբողջ բանակը կրկանգնի...[1]

Երբեմն նա պայքարի կոչող բանաստեղծ—մարտիկ է, որ պահանջում է քնարը փոխարինել շեփորով.

Լքված ու լուռ ճամփաներեն, ո՛չ տավիղ
Եվ ո՛չ քրնար ուսեն առկախ, այլ շեփոր
Մը բռնած վեր. Գողթան երգչաց շառավիղ
Մ՝ ահա թերևս, հնչեցրնելով մարտագոռ
Եղանակ, մ՝ որ կրսարսե ժայռը լերանց՝
Երազաբայլ կանցնի երգիչ մը հիմա....
Արի տղան շարունակվող հին կռվին
Նոր հոգիներ, նոր մարտիկներ կրկանչե,
Ու պիտի տա՝ մինչև իր շունչը վերջին,
Որպեսզի ձայնն ամեն անկյուն թափանցե...[2]

Սակայն ժողովրդի ցավով տոգորված և նրա ազատությունը երազող բանաստեղծը ծանոթ չէ այն ուղիներին, որ պիտի բերեն ըղձալի փրկությունը։ Նրա կոչերը, որքան էլ լավագույն ցանկություններով համակված լինեն, միայնակ որոնողի ապարդյուն ջանքեր են, որքան էլ նա ըմբոստանա տիրող կացության դեմ՝ «Հերիք որքան դահճին ձեռքերը պագենք մենք», ինքն իր հերթին թշնամու հանդեպ «դահիճ դառնալու» ցանկություն ունենա, ի վերջո, անխուսափելիորեն պիտի կանգնի դժվարին վիճակի առաջ. գիտակցի իր անզորությունը։ Եվ որքան ավելի է զգում Թեքեյանն իր ջանքերի ապարդյունությունը, կացության անելանելիությունը, այնքան ավելի ցավագնորեն է նա ընկալում իր հակասությունը՝ տարերային ըմբոստության և անել իրականության միջև։ Այդ տարիների արևմտահայ բանաստեղծության համար բնորոշ է ռեալ իրականությունից փախուստ տալու մի այլ արտահայտություն՝ Հայաստանի հեթանոսական անցյալին դիմելը։ Հեթանոսական անցյալի մեջ էին նրանք որոնում իրենց ոգեշնչման աղբյուրը, կամ «ցեղի» հզորության ու առնականության ոգին։ Դանիել Վարուժանը գտում էր իր «Հեթանոս երգերը», Ռ. Զարդարյանը իր «Թագինի փառաբանությունը», Լ. Շանթը «Հին աստվածները», հրատարակվում էին «Նավասարդ» և «Մեհյան» հանդեսները։ Այդ նույն ճանապարհն է բռնում նաև Վահան Թեքեյանը։ Նա ևս դիմում է իր ժողովրդի անցյալին, վկայակոչում հայոց պատմությունը, նրա թագավորներին և հերոսներին, նրա հեթանոս աստվածներին։

Պատմության հերոսների մոնումենտալ կերպարներն անհրաժեշտ էին բանաստեղծին՝ նրանց իր ժամանակակիցների անզորությանն ու անճարակությանը հակադրելու համար։ Նա ուզում էր առասպելական կերպարների միջոցով իր ժամանակակիցներին ներշնչել արիություն, հզորություն և խիզախելու ձգտում։ Սակայն դա միայն խորացնում էր բանաստեղծի ողբերգությունը, որովհետև նա ավելի մեծ ուժով էր զգում անցյալի առասպելական այդ մոնումենտալ կերպարների և իր ժամանակակիցների միջև եղած անդունդը։ Անցյալի հզոր հուշարձաններն ավելի ցայտուն էին ընդգծում ժամանակակից իրականության և կացության ողբերգությունը։ Եվ փշրված, ճնշված ու հոգնած որոնողն ընկնում է հուսալքության գիրկը.

Տե՛ր, ծերունի պահակն հոգնած է ա՛լ հիմա
Իր անօգուտ, անլուր կոչերը ուղղելեն...
Վարն ամեն ոք կրքրնանա,
Եվ խիստ է ծովն ավելի քան ամեն ատեն...
Հոգիս հոգնած, տե՛ր. կրխնդրե հիմա քենե
Որ մեկ շանթդ ալ գի՛նքը զարնե...[3]

---

1 Վ. Թեքեյան, «Հայերգություն», էջ 21։
2 Նույն տեղում, էջ 23։
3 Նույն տեղում, էջ 175։

Այստեղից սկիզբ է առնում Վահան Թեքեյանի վաղ շրջանի ստեղ)ագործության Երկրորդ գիծը անկումայնության և հոռետեսության գիծը։ Վահան Թեքեյանի ստեղծագործության համար այնքան բնորոշ երկվությունը, հոգեկան երկատվածությունը իր խորը կնիքն է դրել Թեքեյանի ստեղծագործության, մտածելակերպի, զգայմունքների, աշխարհայացքի, այլն նրա կյանքի ու գործելակերպի վրա։ Արտակարգ զգայունությունը և սուր, խորաթափանց միտքը, հարուստ, երազկոտության հասնող երևակայությունը և իրականության խորն ըմբռնումը, իր ժամանակակիցներից շատերի նկատմամբ տածած անվստահությունը և անհուն հավատն ու սերը դեպի մարդը և նրա ազնվությունը,— այս ամենը հավասարապես գոյակցում էին բանաստեղծի հոգում և նրա ստեղծագործության մեջ, ինչպես և պայքարի ու մարտակոչի երգերը գոյակցում են հոռետեսության ու անկումայնության մոտիվների հետ։ Այս վերջինները առավել խորանում են նրա ստեղծագործության մեջ ֆրանսիական գրականության, մասնավորապես Վերլենի ու Բոդլերի ուժեղ ազդեցության տակ։

Արդեն նշեցինք, որ ֆրանսիական սիմվոլիզմը իր հետևորդներին գրավում էր ամենից առաջ իր ձևական նորությամբ։ Սակայն այդ նոր ձևերի հետ (ռոնդո, ռոնդել, վիլանել և այլն) մուտք էին գործում նաև այդ բանաստեղծությունների տրամադրությունները ու հույզերը՝ միայնակության, մահվան ու կործանումի զգացումները։ Այսպես, օրինակ, «Մութին մեջ» ռոնդոյում Թեքեյանը երգում է, որ իր «կյանքն հալի, տարտղնի մութին մեջ».

Մութին մեջ կուզեմ որ կյանքս անցնի
Երազի մը պես մեղմ ու կարճատև,
Անձայն, անշշուկ, ամենեն զգաստի
Այն ճամփուն մեջեն քայլով մը թեթև...[1]

Կամ սիմվոլիստական բանաստեղծությունը հատուկ են նաև այնպիսի գծեր, երբ խոսքը կորցնում է իր ինքնուրույն նշանակությունը, կերպարները դառնում են անորոշ, մշուշապատ։ Ֆրանսիական սիմվոլիզմն իր տրամադրություններով բարենպաստ հող պիտի գտներ բանաստեղծի հոգում՝ հատկապես 1894—1896 թթ. գեպքերի կապակցությամբ, երբ սուլթան Համիդի կազմակերպած ջարդերի զոհ դարձավ արևմտահայության մի հոծ զանգվածը։

Ինքնասունչորսն ինքնասուն և վեց...
Փայլակի նման
Հրդեհներ անցան
Հայ ծեր հոգիեն.
Ու հոգին շողաց, ու հոգին հեծեց...[2]

Այդ երկու կարևոր ազդակների ճնշման ներքո է, որ Վահան Թեքեյանի ստեղծագործության մեջ մուտք են գործում լացի, թախիծի, մենակության կամ մահվան և անհուսության մոտիվները.

Կանգրեմ, տրպա՛ս... Աշունը թաց է,
Թա՛ց աչքերուն պես խեղճ խաբված սիրուն...
Լա՛ց անմեղության արցունքը անդարձ,
Լա՛ց չրգիտնալով, խեղճ անգետ տրպա՛ս,
Խե՜ղճ որսը կյանքին, ա՜հ լա՛ց, որ մեծնաս...[3]

Մերթ նա երազում է «մենավորիկ և մոռացված» ապրել հեռավոր մի գյուղում, մերթ նա «բանտարկյալն է ձանձրույթի», մերթ հանդես է գալիս «արվեստը արվեստի համար» հակաժողովրդական տեսության ջատագովի դերում՝ աշխարհի դեմ դոները փակած առանձնության աշտարակի անբաժան կերպարով.

Պաշտպանելու համար հոգիս, ա՛լ երբեք
Թույլ չրտալու համար կյանքին այլայլ տակ

[1] Վահան Թեքեյան. Երկեր, Երևան, 1958, էջ 21։
[2] Վահան Թեքեյան. «Հայերգություն», էջ 103։
[3] Վահան Թեքեյան. Հատընտիր, Բեյրութ, 1954, էջ 39։

Ամեն օր քիչ մը կորսրվել.— բա՛րձր ու սեգ
Ես աշտարակ մը կառուցի, անհատակ
Ցովուն վերև ու երկրնքին տակ դաժան...
Հո՛ն միայնակ հիմա հոգիս կրքնակի,
Միտքրս պահակ՝ իր դիտակեն անբաժան
Եվ աշխարհի դեմ դուրս գո՛ց կրկնակի...[1]

Թեքեյանի այդ շրջանի գործերի մի կարևոր մասը նվիրված է սիրո զգացումին, սակայն այստեղ ևս անկիրք երազողին, սառնությամբ համակված վշտաբեկ հոգուն պետք չեն իրական սերը, մարմնական ցանկությունները, կիրքն ու հուզումը։ Սիրո զգացման մեջ նրան ավելի զբաղեցնողը սիրելու կարոտն է, քան սիրելը, ձգտելու տենչը, քան թե հասնելու զգացումը.

Աղվորն ա՛ն է հավիտյան՝ որ անցավ օր մը քովեդ
Եվ աչվրնե՛րդ օծեց, աստվածային այցելո՛ւ,
Գեղեցկությամբ մը՝ որուն ա՛լ չըդարձար նայելու,
Եվ չուզեցար հանդիպել անոր անդամ մըն ալ գեթ...
Աղվորն անո՛նք են միայն՝ որ տենչանքիդ ընդմեջեն
Անցան գացի՛ն ու հիմա քեզ հեռուե՛ն կրկանչեն...[2]

Այսպիսով փակվում է շրջագիծը։ Միևնույն բանաստեղծի հոգում կարծես համատեղ ու դաշն գոյակցում են երկու իրարամերժ ասեր։ Մի կողմում՝ պատրանքին կյանքի ցավը հակադրող, բողոքող, խովարար, ըմբոստ որոնողն է ու հայրենասերը. մյուս կողմում դաժան իրականության առաջ գլուխը խոնարհած, իր ըմբոստ զենքերը ցած դրած, կյանքից մեկուսացած, իր հոգին աշխարհի ու մարդկանց հանդեպ ամուր փակած սիմվոլիստ բանաստեղծը՝ իր մեջ խտացրած գրականության այդ հետադեմ ուղղության բոլոր բնորոշ գծերը՝ անհատապաշտությունը, գեղապաշտությունը, միստիկական երազանքները։

Հոգեկան այս երկատվածության պատճառները պետք է որոնել այն հակասության մեջ, որ գոյություն ուներ բանաստեղծի ապրած ժամանակի կոնկրետ իրականության և նրա մտածողության ու աշխարհայացքի միջև։ Հայ ժողովրդի մեջ աճում էր ազատագրական պայքարի ոգին, որն արդեն սնվում էր դեմոկրատական և սոցիալիստական գաղափարներով. այդ էր, որ մարտնչող շունչ էր տալիս բանաստեղծին, մղում նրան պայքարի և ըմբոստության։ Մյուս կողմից հայ իրականության մեջ ուժեղանում էր բուրժուական նացիոնալիզմը, որը մղում էր բանաստեղծին դեպի ազատագրական պայքարի ոչ ճիշտ ուղիները և անխուսափելիորեն հանգեցնում պարտության ու հուսալքության։ Այդ հուսալքումը ավելի էր խորանում հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի դաժան պայմաններում։ Ուժեղանում էր բանաստեղծի հոգում նաև բողոքի զգացումը ընդդեմ տիրող սոցիալական անարդարությունների։ Սակայն նրա սահմանափակ աշխարհայացքը չէր կարող ելք գտնել տիրող կացություններից և պետք է ավելի խճողեր նրան հակասությունների հանգույցի մեջ։

«...Երբ արվեստագետը,— ասում է Պլեխանովը,— դառնում է կույր իր ժամանակի կարևորագույն հասարակական հոսանքների նկատմամբ, այն ժամանակ իր ներքին արժեքով շատ ուժեղ չափով իջնում է այն գաղափարների բնույթը, որ նա արտահայտում է իր ստեղծագործություններում... Նրանց կուրությունը հանդեպ այն նոր հոսանքի, որն ուղղված է թարմացնելու ողջ հասարակական կյանքը, դարձնում է նրանց հայացքները սխալ, նեղ, միակողմանի, և իջեցնում է որակը այն գաղափարների, որոնք արտահայտված են նրանց երկերում։ Դրա բնական հետևանքը հանդիսացավ ֆրանսիական ռեալիզմի անելանելի վիճակը, որը կյանքի կոչեց դեկադենտական հակումները և ձգտումը դեպի միստիկականությունը այն գրողների մոտ, որոնք իրենք նախապես պատկանել էին ռեալիստական (նատուրալիստական) դպրոցին»[3]։

Այդպես է եղել նաև Վահան Թեքեյանի հետ, որի մոտ այդ ամենին ավելանում էին նաև ֆրանսիական դեկադենտական գրականությունից փոխ առած պատրաստի գաղափարները, պատկերները ու տրամադրությունները։

[1] Վ. Թեքեյան. Հատընտիր, էջ 77։
[2] Նույն տեղում, էջ 13։
[3] Г. В. Плеханов, Նշվ. աշխ., էջ 241—242։

Ահա այն ընդհանուր գծերը, որոնք բնորոշ են Վահան Թեքեյանի ստեղծագործության առաջին շրջանի համար, որն ընդգրկում է 1893—1915 թվականները։

3

Վահան Թեքեյանի ստեղծագործության երկրորդ շրջանն ընդգրկում է 1915—1945 թվականները։ Իրը բանաստեղծն այդ ժամանակամիջոցը բաժանել է երկու փուլի և բնութագրել նախ որպես «բայրայման և անզոր մոլուցքի», ապա՝ «տրտմության զուգահեռ՝ խանդավառության շրջան»։

Երբ բռնկեց 1914 թվականի առաջին համաշխարհային պատերազմը, ազգայնական մոլուցքով տարված հայ բուրժուական մտավորականությունն այն ընդունեց ցնծագին ողջույնով, կարծելով, թե նրա մեջ պիտի գտնի հայկական դատի վերջնական լուծումը։ Վահան Թեքեյանը եղավ այն հազվադեպ հայ մտավորականներից մեկը, որը ոչ միայն հեռու մնաց շովինիստական այդ խելագար վայնասունից, այլև իսկական հումանիստ գրողին հատուկ զայրույթով նշավակեց պատերազմը որպես մարդկության ճակատագրի, «սիրո, եղբայրության քաղցր երազի» դեմ մեծագույն ոճիր, որ կատարվում էր հանուն «...Ոտար շահու, փառքի մը համար»։

Սակայն պատերազմի դեմ բողոքող մարտիկի առնական ձայնը շատ շուտով պետք է վերագտներ իր վեհերոտ և հուսակտուր շեշտը։ Այս անգամ առավել սև ու դժնի գույներով։ Հայկական մեծ եղեռնը, որին ականատես եղավ բանաստեղծը, իր ահավոր սարսափներով պիտի երկար ժամանակով նրան գցեր անհույս հոռետեսության գիրկը։ Այդ «հարվածը անգութ» պիտի տարիներ շարունակ նրա բնարը մատներ ողբի և օգնության ճիչեր արձակելու.

Ահավոր բան մը այնտեղ կրկատարվի մութին մեջ,
Կսպանե՞ն ազգ մը այնտեղ, որ կյանք ուներ և շընորհ,
Ուներ հանճարն ապրելու, նորոգելու ալ ինքզինք,
Գեղեցկացրած էր տակավ ու թարմացրած, ա՜հ, ո՞րքան,
Եվ այդ ազգը. մերինն էր, և կսպանե՞ն զայն հիմա,
Զայն կ՚սպանե՞ն.... օգնությո՞ւն, ա՜հ, օգնությո՞ւն, օգնությո՞ւն...[1]

Զարհուրելի սպանդն իր կոշմարային հետևանքներով խավար ու մռայլ պատկերներ էր թելադրում բանաստեղծին։ Նա նորից կանգնում է այն իրականության առաջ, երբ «ամեն երազ բրզրկտած և ամեն հույս փետրաթափ»։ Եվ ամայացած կյանքը հառնում է նրա առաջ, ինչպես մահ։ Մահվան ուրվականը և մահվան շունչն է փչում նրա բանաստեղծության յուրաքանչյուր տողից «Եվ կրթողու մեզ երկրի վրրա մեռել՝ կենդանի...»։ Անձնատուր լինելով անել հուսահատության, նա նորից հռչակում է ամեն ինչ ապարդյուն ու անհույս. «Զուր է եղեր ամեն բան, ամեն փափագ. ամեն ջանք»։ Վահան Թեքեյանի այդ տարիների բանաստեղծությունները մերթ հնչում են որպես թաղման զանգ կամ դամբանական, մերթ որպես անզոր բողոք ընդդեմ աստծո և աշխարհի.

Խնդա՞նք աշխարհի ժահրոտ երեսին...
Խնդա՞նք աստուծո ալ ժանտ երեսին...[2]

Հայկական եղեռնի առաջին մղձավանջային պատկերներին պիտի հաջորդեին դրա անմիջական արդյունք հանդիսացող սրբության ծանր երգերը։ Վահան Թեքեյանը տարիներ շարունակ զբաղվել է հայ որբերի ճակատագրի հարցով, և բնական է, որ որբանոցային կյանքի տպավորությունները պիտի առատ նյութ մատակարարեին նրա բանաստեղծություններին։ Այսպես ծնունդ է առնում հայ որբերի ծանր կացությունը պատկերող բանաստեղծությունների մի ամբողջ շարք՝ «Գեղոն հայ որբին», «Գորգոն որբերու», «Որբերուն աղոթքը», «Որբ իշխան», «Որբերուն ձեռքերը».

[1] Վ. Թեքեյան, Հայերգություն, էջ 36—37։
[2] Նույն տեղում, էջ 54։

Զեռքե՛ր, հազի՞վ թե հիշող ջերմությունն հոր մը ափին,
Որ զույգն իրենց կրծածկեր երբոր թաթիկ էին գեռ,
Տախտակներու վրա չոր, ձեղուններու տակ ցրտին
Հիմա սառող քովե՞ր ով՝ հայ որբերու ո՞րբ ձեռքեր...[1]

Արևմտահայության զանգվածային տեղահանությունը, կոտորածն ու աքսորը ստեղծեցին հայկական սիրտը, ուր հայրենիքից ու հողից պոկված հայության ծանր գոյավիճակը, աստանդական կյանքը, ձուլվելու վտանգը, տնտեսական դժվարությունները տանում էին ժողովրդին դեպի դանդաղ մահացում։ Հայրենասեր բանաստեղծի սիրտը խոցում է իր ժողովրդի այդ ծանր ճակատագիրը։ «Ես ենք կմեռնենք ամեն օր», ասում է նա։ Այդ զգացումն է, որ ծնունդ է տալիս բանաստեղծությունների՝ «Մութ ժամեր» շարքին։ Բանաստեղծին լուրջ մտահոգություն է պատճառում այն, որ հայ ժողովուրդը «ինկած է անդունդի մեջ», վերածվել է «փոշե ազգի»։ Ինչ թեմա էլ շոշափի այդ շրջանում Թեքեյանը, այն համակված է խորը հոռետեսությամբ։ Ուրախության կամ ոգևորության ոչ մի նշույլ, ոչ մի հույս.

Բայց հիմա քիչ, օհ շատ քիչ, կրնամ այլևս խնդալ,
Հիմա հոգիս ինքնիրմով բըզբկտված է այնքան,
Այնքան ցավոտ, վիրավոր՝ որ իր ծիծաղն ու ծաղրն ալ,
Էն առաջ գինք կարյունեն և իր վրա կըմրնան...[2]

Ինչպես նախորդ, այնպես էլ այս շրջանում Թեքեյանը լի է հակասություններով, չի գտնում ճիշտ կողմնորոշում և ելքի ճիշտ ճանապարհ, այդ է. որ առավել ևս խորացնում է նրա անհուսությունը։

1921 թվականին, այն ժամանակ երիտասարդ գրող Լևոն Զավեն Սուրմելյանին գրած իր մի նամակում Վահան Թեքեյանը հետևյալ կերպ է բնութագրել իր հոգեվիճակը. «Ես, որ մինչև հիմա բավական քաջությամբ գինվա՝ կշանայի քեզ ալ քաջ պահել, հիմա ինքզինքս չափազանց տկարացած կզգամ հոգով, և ինծի կթվի, թե ոչինչ կա, որ զիս կարենա զորացնել, և չեմ գիտեր, թե ինչի կրնամ կառչել այսուհետև՝ հիմարության կամ մահվան զառիթափն ի վար չգլտորել չերթալու համար... մթությունը ոչինչ կլուսավորե այստեղ»։[3]

Բանաստեղծն իր այդ շրջանի գործերում մերթ պայքարում է «աստծո անարդարության» դեմ, մերթ ընկնում է իրոր միստիցիզմի մեջ՝ աստծուց հայցելով միակ փրկությունը, երբեմն նրա գործերն ընդունում են նացիոնալիստական բնույթ. երբեմն դառնում ընդգծվածորեն կրոնաշունչ, վերագրելով կրոնին ու եկեղեցուն չեղած արժանիքներ մեր ժողովրդի պատմության մեջ։

Որքան էլ հասկանալի են ու բացատրելի բանաստեղծի այդ մոլորությունները, նրա տանջալի որոնումներն ու դեգերումները, սակայն նրանք մնում են ցավալի վրիպումներ Վահան Թեքեյանի ստեղծագործական կենսագրության մեջ։

Կորացած ու ճզմված կյանքի դաժան հարվածներից. ամեն ինչից հուսախաբված ու հիասթափված՝ նա երկար ժամանակ չի կարողանում ճշմարիտ աչքերով տեսնել նաև վերածնված Հայաստանի պայծառ իրականությունը. որը հայ ժողովրդի համար փրկության միակ ճանապարհն էր։ 1922 թվականից նրա մեջ այդ ուղղությամբ արդեն առաջացել էր որոշ բեկում. սակայն նա գեռ ուներ լուրջ տատանումներ ու տարակուսանքներ, որոնց համար արդեն 1933 թվականին հոգեկան մեծ ազնվությամբ, պետք է ներողություն հայցեր իր հայրենիքից.

Ներե՛, որ քեզ ըրի քեզի քիչ մը ատեն,
— Մինչև երեկ—ու գեռ տաք չեմ բոլորովին...
Բայց կրխըլե շունչդ ինձմե կայծեր արդեն՝
Զրփայլած հին ու փայլելիք բոցին հաշվին...[4]

Դեռևս 20-ական թվականների կեսերին, իր ամենահուսահատական տրամադրությունների շրջանում էլ, Սովետական Հայաստանի իրականությունը երբեմն նրան բերում էր ոգու պայծա-

[1] Վ. Թեքեյան, Հայերգություն, էջ 86։
[2] Վ. Թեքեյան, Հատընտիր, էջ 58։
[3] Վահան Թեքեյանի նամակները Լ. Զ. Սուրմելյանին, Նյու-Յորք, 1950, էջ 48։
[4] Վահան Թեքեյան, Հայերգություն, էջ 127։

ռացումներ։ Այսպես, նույն Զ. Լ. Սուրմելյանին 1925 թ. ուղարկած իր մի նամակում նա գրում էր. «Պետք է անկեղծորեն ասեմ ես ալ քեզի՝ թե տեսակ մը Ռոմյուհիստ ալ ես եմ, բոլորովին բնդի նման, միայն սա տարբերությամբ, որ զանգվածին օգնելու ուժը կամ պատրանքը չունիմ այլևս, և իրավունք կուտամ զանգվածին, որ զիս արհամարհե իմ տկարությանս համար։ Բայց իր ճնշված ուժեն կպատկառիմ և գիտնալով թե որքան թշվառութենե ու ցավե կազմված է անիկա՝ կսիրեմ զայն։ Կխորհիմ, հետո, թե իր թվին մեծության մեջ համեմատաբար որքան շատ գեղեցկություն կա պահված, և այդ պատճառով ալ՝ գորովանքով և հիացմամբ կնայիմ իր վրա...»[1]։

Տեղեկանալով, որ Լևոն Զ. Սուրմելյանը բանակցություններ է վարում "ովետական Հայաստան տեղափոխվելու համար՝ Վահան Թեքեյանը խանդավառությամբ շտապում է գրել նրան, որ իրեն էլ տանի հետը. «Քեզ Հայաստան կհրավիրե՞ն արդեն։ Ի՞նչպես։ Ուրեմն կ՚երթա՞ս կոր, ե՞րբ։ Ու չմոռանաս ըսելու, թե հետդ մեկը պիտի առնես Եգիպտոսեն, որ ոչ օրի թշնամի է այնտեղ և ամեն պարագայի մեջ շատ բարեկամ է հայ երկրին ու ժողովրդին»[2]։

Մի այլ նամակում նա խոսում է Սովետական Հայաստան գնալու և այնտեղ իր անելիքների խանդավառ ծրագրերի մասին. «...միասին կերթանք Հայաստան՝ հոն մեծ. և պզտիկ տղոց մեջ աշխատելու, անոնցմե առնելու և անոնց տալու համար մեր լավագույնը։ Իր հողին վրա, ամենուրեք իրեններուն միայն հանդիպելով՝ մարդ կր հավատա թե իր կրցածին լավագույնն ու մեծագույնը կուտա, և այդ է, որ զիս կը հրապուրե հիմա»[3]։

Սովետական Հայաստանի կենսահաստատ իրականությունը եղավ այն ուժը, որ հետագա տարիներին դուրս բերեց Վահան Թեքեյանին նրա հոգեկան անհույս ու անել վիճակից, սփոփեց նրա անհուն վիշտը, պայծառ ու լավատեսական շունչ տվեց նրա ստեղծագործությանը, որովհետև այդ իրականությունը շատ ավելի գերազանց էր նրա սպասածից։ Դիմելով իր «Ներկա Հայաստանին»՝ Վահան Թեքեյանը գրում էր.

Ու գոհացա՜վ միտքրս քեզմով. ըսփոփվեցա՜վ,
Ուրախացա՜վ մինչև անգամ. քեզի դիմեց
Ու կրդիմե հիմա՝ ինչպես գանձի՜ մը մեծ...
Տարրե՜ր ես դուն մեր երագեն.—ավելի՜ լավ...
Ավելի լա՜վ, կր՚սեմ, այո՛, անգիդ, անգութ...[4]

Հետագա տարիներին Վահան Թեքեյանը Սովետական Հայաստանին նվիրեց բանաստեղծությունների մի ամբողջ շարք, որտեղ խանդավառ կերպով գովերգեց իր նորոգ հայրենիքը։ Ինչպես այդ գործերում, նույնպես և այդ տարիներին գրած նրա բանաստեղծություններում հետք անգամ չկա նախորդ շրջանի հուսալքությունից։ Նա արդեն համոզված է նայում իր ժողովրդի ապագային, գիտե, որ այն ամուր և երջանիկ հիմքերի վրա է խարսխված։

Վահան Թեքեյանն անցավ XX դարի հայ բուրժուական մտավորականի համար բնորոշ խարխափումներով, անկումներով ու վերելքով լի մի ճանապարհ։ Նա ապրեց ճշմարտության ուղիների ցավագին որոնումներ, խարխափեց, մոլորվեց, հուսահատվեց, սակայն իր վերածնված սոցիալիստական հայրենիքի անժխտելի պայծառ իրականությունը, ի վերջո բացեց նրա աչքերը, դուրս բերեց նրան ճիշտ ճանապարհ։ Նա վստահ կանգնեց իր նորոգ սոցիալիստական հայրենիքի կողքին։

Ապրելով իր ժողովրդի ամենադառն օրերը՝ նա տեսավ նաև նրա վերածնունդը։ Բազմատանջ բանաստեղծի ծերության տարիները ջերմացան իր ժողովրդի ապագայի պայծառ տեսիլքով։

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի և նրա ապագայի հարցը մշտապես եղել է ամեն մի ազնիվ հայ հայրենասերի մտահոգության առարկան։ Քսաներորդ դարի առաջին տասնամյակներում այն հանդիսացավ մի տեսակ փորձաքար իր ժողովրդի վիճակով տառապող ամեն մի հայ մտավորականի համար։ Նրանք ցավագնորեն որոնում էին այդ հարցի լուծման ճշմարիտ ուղին, որպեսզի նպատակասլաց կերպով ծառայեցնեն իրենց ուժերը հանուն այդ ժողովրդի ապագա երջանկության։ Հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ Հովհ. Թու-

---

[1] Վահան Թեքեյանի նամակները Լ. Զ. Սուրմելյանին, էջ 77։
[2] Նույն տեղում, էջ 79։
[3] Նույն տեղում, էջ 81։
[4] Վահան Թեքեյան, Հայերգություն, էջ 127։

մանյանը, Ալ. Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը և շատ ուրիշներ ժամանակին ճշտեցին իրենց դիրքորոշումը։ Երկար խարխափումներից հետո, այդ ճշմարտությանը հասավ նաև Վահան Թեքեյանը։

Բանաստեղծի իր ամբողջ էությամբ նա ողջունեց ռևոլյուցիոն ռուս ժողովրդին, որը փրկարար գեր խաղաց անցյալում ճնշված ու հալածված շատ ժողովուրդների ճակատագրում։ 1944 թ. նա ֆրանսերեն լեզվով գրեց իր նշանավոր գործերից մեկը՝ «L'Arménie a la Russie» —«Հայաստանը Ռուսաստանին» բանաստեղծությունը, որը կարդաց Կահիրեում Սովետական Միության դեսպանատանը[1], արժանանալով խանդավառ ընդունելության.

Նայի՛ր, ով Ռուսաստան, զավակներիդ, որ պաշտպանում են քեզ—
Այն եղբայրաշունչ ազգերի հետ, որոնց դու պաշտպանեցիր,
Եվ որոնք քեզանով այսօր իրենք իրենց են պաշտպանում.
Նայի՛ր հինավուրց Հայաստանին, որ քո շնորհիվ
Վերագտել է իր ուժն ու հանճարը՝
Մարտերի մեջ, որ քեզ հետ մղում է նա
Եվ մարտի տար բոպեին նայում է քեզ, ո՛վ Ռուսաստան,
Եվ մոտից ու հեռվից ասում,— շնորհակալությո՛ւն։

Դա բանաստեղծի նոր կրեդոն էր՝ հավատո հանգանակը և միաժամանակ նրա կտակը գալիք հայ սերունդներին։

Արդեն ալեոր հասակում նա կատարեց իր կյանքի ամենամեծ սխրագործությունը՝ ստեղծագործության և քաղաքական հայացքների վճռական շրջադարձը։ Դրանով իսկ նա գրավեց պատվավոր տեղ հայ ժողովրդի լավագույն զավակների մեծ պանթեոնում և իր անմահությունը՝ սերունդների սրտում։

ТВОРЧЕСКИЙ ПУТЬ ВАГАНА ТЕКЕЯНА

Р. ГРИГОРЯН

(Резюме)

В литературе западных армян последнее десятилетие прошлого века ознаменовалось появлением целой плеяды блестящих мастеров слова — Рубена Ворберяна, Вагана Текеяна, Даниела Варужана, Мисака Мецаренца и др. Среди них особое место занимает Ваган Текеян. Творчество Вагана Текеяна прошло сложный, полный противоречий путь развития.

Будучи многими особенностями своего творчества тесно связан с современным ему литературным поколением, Ваган Текеян в дальнейшем пережил очень сложную эволюцию. В литературу он вступил как ярко выраженный представитель декадентского направления в искусстве. Отдавая дань господствующим субъективистско-мистическим литературным течениям, он выразил в своих стихах настроения одиночества, тоски и горечи, безнадежности и обреченности, а иногда — подчеркнуто националистические мотивы. В. Текеян был блестящим мастером изысканной стихотворной формы.

В последние годы своей жизни В. Текеян сумел освободиться от оков декадентской разобщенности с жизнью, стать на реальную, здоровую почву и создать реалистические произведения, в которых были выражены передовые идеи. Сложный и противоречивый творческий путь не помешал В. Текеяну правильно оценить великую роль Октябрьской революции в судьбе армянского народа и стать одним из горячих защитников молодой Армянской Советской Социалистической Республики.

[1] Վ. Թեքեյան, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 480։

[2] Նույն տեղում, էջ 129 (բերված է թարգմանաբար)։